ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2024 թվականի N 161-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 1324-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 12-ի «Օրինապահ հարկ վճարող համարելու չափանիշները և օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1324-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված Հավելված N 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետի 2-րդ ենթակետում «ԱԱՀ (այդ թվում՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ գումար)» բառերը փոխարինել «0-ից մեծ ԱԱՀ-ի հարկման բազա» բառերով.

2) 1-ին կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7) դիտարկվող ժամանակահատվածի սկզբից և մինչև դիմումը ներկայացնելու օրը հարկային և (կամ) մաքսային մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի (պաշտոնատար անձի) նկատմամբ արձանագրած

իրավախախտումների բացակայություն (այդ թվում, երբ արձանագրված իրավախախտումը վերաբերում է դիտարկվող ժամանակահատվածից տարբերվող ժամանակահատվածին): Սույն չափանիշի իմաստով իրավախախտում է համարվում նաև համալիր հարկային ստուգումների և ուսումնասիրությունների ընթացքում ստուգվող ժամանակահատվածի համար հարկ վճարողի կողմից հաշվարկների (հայտարարագրերի, այդ թվում՝ ճշտված) ներկայացումը և (կամ) ընդունված վարչական ակտերով (այդ թվում՝ ստուգման ակտերով կամ ուսումնասիրության արձանագրություններով) արձանագրված իրավախախտումները՝ անկախ այդ վարչական ակտերի անբողոքարկելի համարվելու համար օրենքով սահմանված ժամկետներից կամ այդ ակտերի բողոքարկված լինելու հանգամանքից.».

3) 1-ին կետի 8-րդ ենթակետում «քրեական կամ» բառերը հանել, իսկ «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) 1-ին կետը 8-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ և 10-րդ ենթակետերով՝

«9) դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ հարկ վճարողի առնչությամբ կամ դրա պաշտոնատար անձի նկատմամբ քրեական օրենսգրքի 32-րդ գլխով նախատեսված տնտեսական հանցագործությունների կամ մաքսանենգության դեպքերի վերաբերյալ նախաձեռնված և չավարտված քրեական վարույթի բացակայություն.

10) դիմումում լրացված գործունեության ոլորտի (ոլորտների) համապատասխանում հարկ վճարողի կողմից իրականացվող փաստացի գործունեությանը:».

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին և 1.2-րդ կետերով՝

«1.1. Դիտարկվող ժամանակահատվածի սկզբից մինչև դիմումը ներկայացնելու օրը հարկ վճարողի վերակազմակերպված լինելու դեպքում սույն կարգի 1-ին կետով սահմանված չափանիշներին բավարարելու պահանջների գնահատումը ներառում է նաև իրավանախորդ կազմակերպությունների գործունեության արդյունքները:

1.2. Սույն կարգի 1-ին կետի 3-րդ, 8-րդ և 9-րդ ենթակետերով սահմանված չափանիշներին բավարարելու պահանջների գնահատումը ներառում է նաև դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ հարկ վճարողի՝ փոխկապակցված համարվելու կամ փոխկապակցված ճանաչվելու համար ՀՀ հարկային օրենսգրքի 30-րդ հոդվածով

սահմանված հիմքերի առկայության դեպքում հարկ վճարողի և վերջինիս հետ փոխկապակցված բոլոր հարկ վճարողների գործունեության վերաբերյալ տեղեկությունները:».

6) 2-րդ կետում «1 մլն» բառերը փոխարինել «4 մլն» բառերով.

7) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու համար դիմում ներկայացրած հարկ վճարողներին, որոնք բավարարում են «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 289-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պայմաններին, և առկա չեն Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 434-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված դիմումի ուսումնասիրությունը մերժելու հիմքերը, տրամադրվում է հավաստագիր համաձայն հավելված 2-ի ձև 3-ի՝ բացառապես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու համար, եթե հարկ վճարողի սույն կարգի 2-րդ կետով սահմանված իրավախախտումների արդյունքում հաշվարկված կամ հարկային (մաքսային) մարմինների կողմից լրացուցիչ առաջադրված պարտավորությունների հանրագումարը չի գերազանցում դիտարկվող ժամանակահատվածի համար հարկ վճարողի կողմից ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված ԱԱՀ-ով հարկման բազայի 0,8%-ը:»:

2. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված Հավելված N 2-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 5-րդ կետի «N 2 ձևի» բառերը փոխարինել «ձև N 2-ի, իսկ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու համար դիմում ներկայացրած հարկ վճարողին՝ համաձայն սույն հավելվածի ձև N 3-ի,» բառերով.

2) 7-րդ կետի «ցանկը հրապարակվում է» բառերը փոխարինել «ցանկերը հրապարակվում են» բառերով.

3) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9) Օրինապահ հարկ վճարողի հավաստագրի գործողության ընթացքում հարկ վճարողը սույն հավելվածի N 2 ձևի նոր հավաստագիր ստանալու համար կարող է դիմել գործող հավաստագրի ժամկետի 12-րդ ամսվա 1-ից, իսկ սույն հավելվածի N 3 ձևի նոր հավաստագիր ստանալու համար կարող է դիմել

հավաստագրի տրման օրվան հաջորդող ամսվա 1-ից: Նշված ժամկետներից շուտ ներկայացված դիմումները մերժվում են:».

4) ձև N 1-ի 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7.1-ին և 7.2-րդ կետերով՝

«

7.1.	ԼՏՕ ռեեստրում գրանցվելու համար մաքսային մարմին ներկայացված դիմումի ամսաթիվ կամ	օր	ամիս	տարի
7.2.	գործող ԼՏՕ վկայականի համար			

».

5) ձև N 1-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ կետով՝

«9. ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն իրավանախորդ հանդիսացող կամ փոխկապակցված ճանաչված հարկ վճարողները.

Հ/Հ	**Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)**	**Հարկ վճարողի անվանում (անուն ազգանուն) և իրավական տեսակ**	**Իրավանախորդության, փոխկապակցվածության**	
			Հիմք	**Ամսաթիվ**
1				

».

6) լրացնել նոր ձև N 3-ով՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման ամսվան հաջորդող երկրորդ ամսվա մեկից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ